չարժական կայքը արքունի հաշուով տեղափոխել։ Դարձեալ ճանապարհի պիտոյքնին հոգալ, և երբ հասնին սահմանեալ տեղը, ընորհել արքունուստ ցանելու կարևոր հունտը, և մինչև նոր ցորենը հասնելուն՝ տալ իրենց ապրուստ. ճանապարհին ոչ ոք չխուէ զիրենք, և տեղերնին հասնելէն վերջը հոս հոն տեղափոխուելու չստիպուին։

Տէրութեան կողմանէ քրիստոնէից տրուած պարգևագիրը՝ մագաղաթի վրայ տպուած է ռուս և հայ լեզուներով, և ոսկի մեծ արքունի կնքով կնքուած 1779, Նոյեմբերի 4. զոր Կատարինէ Բ. ստորագրած է. Նորանէ վերջ հետզհետէ, իրենց թագաւորութեան միջոց՝ ստորագրութեամբ վաւերացուցած են Պաւել, Ա. Ալեքսանդր, Ա. Նիկոլայոս։ Մեր օրերը՝ այն է (1868) Ալեքսանդր Բի թագաւորութեան միջոց, երբ հասարակաց զինուորագրութեան և այլ բարեկարգական օրէնք հրատարակուեցան 'ի Ռուսաստան, ինչպէս այլ զանազան ժողովրդոց արտօնութիւնք, նոյնպէս մեր Ղրիմեցի և Նախիջևանցի հայկազանցը, հասարակաց օրինաց ենթարկուեցան, և Հայք ևս սկսան զինաւոր տալ։

Ե

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այս ծանր և մտատանջ խնդիրը 3–4 ամիս մեր պապերը, բարոյապէս և նիւթապէս տագնապելէն և վրդովելէն յետոյ, վերջապէս կը յանձնուի առ Սուորով մեծ զօրավարն (ապա կոմս Իտալիոյ), որ